ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արձանագրություն 1

2017թ փետրվարի 15-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան
Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար թեկնածուի առաջադրում:
2. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի նախընտրական ծրագրի դրույթների ներկայացում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար թեկնածուի առաջադրման հարցը: Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ. Ասոյանը: Նա նշեց, որ ԳՊՀ գիտխորհուրդը այդ պաշտոնի համար պետք է առաջադրի իր այն թեկնածուին, որը օժտված լինի կազմակերպչական ունակություններով, հաստատության կառավարման համար ունենա համապատասխան փորձ ու գիտելիքներ, ցուցաբերի բարոյականային բարձր որակներ աշխատանքային և մարդկանց հետ հարաբերություններում: Նկատի ունենալով այս հանգամանքները՝ Թ. Ասոյանը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար առաջարկեց Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանը, դեկաններ Հ. Ղաջոյանը, Ս. Ամիրխանյանը, Մ. Ավագյանը:

Անցկացվեց բաց քվեարկություն: Թ. Ասոյանի առաջարկն ընդունվեց միաձայն: Հաշվի առնելով ելույթներն ու քվեարկության արդյունքը՝ ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ՝

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար առաջարկել ԳՊՀ ռեկտորի պաշտոնակատար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի թեկնածությունը:
2. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի որոշումը ներկայացնել հոգաբարձուների խորհրդին:

ԼՍԵՑԻՆ.-«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի նախընտրական ծրագրի դրույթների ներկայացման հարցը: Զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ համալսարանի զարգացման հեռանկարներին՝ միաժամանակ վերլուծելով կատարված աշխատանքները: Ըստ ներկայացված գործողությունների հնգամյա ծրագրի՝ ԳՊՀ-ն իր գործունեությունը պետք է ծավալի՝ ելնելով բուհի կրթական, գիտական, դաստիարակչական, լուսավորական, մշակութային առաքելությունից: Համալսարանի տեսլականը պետք է լինի որակի մշակույթի արմատավորումը ուսումնական գործընթացում, ուսուցման առկա և հեռակա համակարգերում, ուսանող-դասախոս հարաբերություններում, գիտելիքների ստուգման համակարգերում: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ գործողությունների ուղղություններին, առաջնահերթություններին ու նպատակին, միջազգային կրթական ծրագրերի իրականացման հարցերին: Նշվեց, որ դեռևս կան չլուծված խնդիրներ. բուհի հանրակացարանի նորոգում, դասախոսների կեցության պայմանների բարելավում, լսարանների, գրադարանների և ընթերցասրահների արդիականացում և տեխնիկական վերազինում, մարզահրապարակների ու փոքր տպարանի ստեղծում:

Ռ. Հակոբյանը հավաստիացրեց, որ տարբեր ուղղություններով տարվող աշխատանքները կլինեն շարունակական և արդյունավետ:

Լսելով և քննարկելով Ռ. Խ. Հակոբյանի նախընտրական ծրագիրը՝ ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ՝

1.Հավանություն տալ ԳՊՀ ռեկտորի պաշտոնակատար Ռ. Հակոբյանի ներկայացրած գործողությունների ծրագրին:

2.Գործողությունների հնգամյա ծրագիրը՝ որպես ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագիր երաշխավորել՝ ներկայացնելու «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 2

2017թ մարտի 25-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 27-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկ՝. ԲՖ դեկան Թ.Ասոյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկ՝. ԲՆՖ դեկան Մ.Ավագյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԲՖ դեկան Թ.Ասոյանի հաշվետվությունը բանասիրական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի մասին: Զեկուցողը նախ անդրադարձավ ընդունելությանը՝ նշելով, որ այստեղ միտումները բացասական են, ապա ներկայացրեց ուսանողների շարժը ֆակուլտետում: Ֆակուլտետի առաջադիմության հետ կապված վիճակագրությունն ու վերլուծությունները Թ.Ասոյանը ներկայացրեց նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատությամբ: Զեկուցողը նշեց, որ ժամանակի պահանջներն արտացոլելու համար պետք է ուշադրության կենտրոնում պահել ուսպլաններն ու առարկայական ծրագրերը: Ֆակուլտետի ամբիոններում, խորհրդում պարբերաբար քննարկվում են դրանց հետ կապված փոփոխությունները, արդյունքում մի շարք նոր դասընթացներ են ներառվել ուսումնական պլանում: Կրթական ծրագրերի իրականացումը ապահովում է ֆակուլտետի որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, գիտական սեմինարներ: Թ. Ասոյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում աշխատանքներն ավելի շատ են լինում՝ կապված ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության, ամփոփիչ ատեստավորման, խորհրդատվությունների կազմակերպման և այլ միջոցառումների հետ, ուստի ներկայացված գործողությունների ծրագիրն ավելի հագեցած ու բազմազան է: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ԲՖ դեկան Թ. Ասոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ԲՆՖ դեկան Մ. Ավագյանի հաշվետվությունը բնագիտական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության և 2-

րդ կիսամյակի գործողությունների ծրագրի մասին: Զեկուցողը նշեց, որ բնագիտական ֆակուլտետում աշխատանքները կատարվել են համաձայն ֆակուլտետի զարգացման հայեցակարգի և կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրի: Աշխատանքներն ընթացել են համակարգված, ցուցաբերվել է միասնական մոտեցում: Հրավիրվել են ֆակուլտետի խորհրդի նիստեր, որոնցում քննարկվել են ուսումնական, կազմակերպական գործընթացներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ 2016թ. ընդունելությանը: Նշվեց, որ ուսանողների սակավաթվությունը հիմնականում պայմանավորված է եղել միասնական քննություններին ցածր միավորներ ստանալով: Ներկայացվեցին առաջադիմության ցուցանիշներն ըստ բաժինների, կուրսերի և ֆակուլտետի: Ֆակուլտետային կյանքը հետաքրքիր են դարձրել կազմակերպված բազմաբնույթ միջոցառումները և ֆակուլտետային ու հանրապետական գիտաժողովները: Ուշադրություն է դարձվել պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի համալրման հարցերին: Ուսումնական գործընթացը հաջողությամբ կազմակերպելու նպատակով վերանայվել են ուսումնական պլանները, թարմացվել են առարկայական ծրագրերը, դրանք համապատասխանեցվել են ուսուցման 16-շաբաթյա տևողությանը: Ֆակուլտետը մասնակցել է միջազգային ծրագրերի, որոշ ուսանողներ սովորել են այլ երկրներում: Այնուհետև ներկայացվեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Գայանե Ռուբենի Սարգսյանին ԺԳ.00.00 մասնագիտության գծով դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը: Հարցի մասին զեկուցեց ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանը: Նա նշեց, որ հայցորդի գիտամանկավարժական գործունեության հետ կապված տվյալները բավարարում են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ԲՈՀ-ի առաջադրած պահանջները: Առկա են համապատասխան փաստաթղթերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ԲՖ դեկան Թ.Ասոյանը, օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ.Միրիբյանը: Նշվեց, որ Գ. Ռ. Սարգսյանը իր գիտամանկավարժական գործունեությունն իրականացնում է բարձր մակարդակով, մասնակցում է գիտաժողովների, վերապատրաստումների, միջազգային համագործակցության շրջանակներում դասախոսական աշխատանք է իրականացնում տարբեր երկրների համալսարաններում, հանդես է գալիս շնորհանդեսներով: Գ.Ռ.Սարգսյանը արժանի է դոցենտի կոչմանը:

Կազմվեց հաշվիչ հանձնաժողով /նախագահ՝ Հ.Ղաջոյան, քարտուղար՝ Ռ.Սարգսյան, անդամ՝ Գ.Միրիբյան/ և անցկացվեց փակ քվեարկություն:

Քվեարկության արդյունքը ներկայացրեց Հ.Ղաջոյանը. քվեաթերթիկների ընդհանուր քանակը՝ 31, բաժանված քվեաթերթիկների քանակը՝ 27, քվեատուփում առկա քվեաթերթիկների քանակը՝ 27, կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- 1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Գայանե Ռուբենի Սարգսյանին ԺԳ.00.00 մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում:

2.ԳՊՀ գիտական խորհրդի որոշումը ներկայացնել ԲՈՀ՝ հաստատման:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 3

2017թ ապրիլի 15-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 25-ը:

Օրակարգ՝

1.Հասարակական գիտությունների ամբիոնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և և զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝. ամբիոնի վարիչ Լ.Քուրքչյան/

2.Հաշվապահական հաշվառման ամբիոնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և և զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝. ամբիոնի վարիչ Հ.Ղուլոյան/

3.Կառավարման և ֆինանսների ամբիոնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և և զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝. ամբիոնի վարիչ Հ.Զաքոյան/

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-Լ.Քուրքչյանի զեկուցումը ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը ներկայացրեց «Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/» բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների առաջադիմությունն ըստ կուրսերի՝ համեմատությամբ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի: Նշվեց, որ ելնելով այն հանգամանքից, որ 2016-2017 ուստարում որոշ բաժինների ուսանողները ստանալու են մանկավարժի որակավորում, վերանայվել և մշակվել են մանկավարժահոգեբանական առարկայական դասընթացները, դասավանդվում են նոր առարկաներ՝ «Գործնական մանկավարժություն/ՏՐ 4/», «Հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդաբանություն» և «Մանկավարժական արժեբանություն» /մագիստրատուրա/: Ամբիոնը սպասարկում է 45 առարկայական ծրագիր, մշտապես համալրվում է էլեկտրոնային ուսուցման համակարգը: Կազմակերպվել են խորհրդատվություններ առկա և հեռակա ուսուցման բաժինների ապագա մանկավարժների մասնագիտական պրակտիկայի անցկացման վերաբերյալ: Ամբիոնը համալրված է բարձրակարգ մասնագետներով, որոնք ակտիվորեն զբաղվում են գիտահետազոտական գործունեությամբ, միաժամանակ նպաստում են ուսանողների հետազոտական որակների բարելավմանը: Դրա շնորհիվ ուսանողները մասնակցում են հանրապետական և ներբուհական գիտաժողովների: Ամբիոնը համագործակցում է որակի ապահովման, լրատվական բաժինների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

Զարգացման հայեցակարգում հատկապես կարևորվեցին գործնական հմտությունների, ուսումնական գործընթացի կազմակերպման, գիտելիքների գնահատման, ուսանողներին ամբիոնի աշխատանքներում ներգրավելու հարցերը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ. Լ. Քուրքչյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Հ.Ղուլոյանի զեկուցումը ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նշեց, որ ամբիոնի նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, որին կարելի է հասնել ուսանողների բարձր առաջադիմությունն ապահովելու ճանապարհով, ուստի նա սկզբում ներկայացրեց բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների առաջադիմության հետ կապված ցուցանիշները՝ կատարելով վերլուծություններ և համապատասխան եզրահանգումներ: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ծրագրերում, ուսպլաններում կատարված փոփոխություններին: Կատարվել են ժամաքանակի փոփոխություններ, նոր արդիական առարկաներ են ներառվել ուսպլաններում: Թարմացվել են առարկայական ծրագրերը, որը շարունակական բնույթ է կրում՝ պայմանավորված տնտեսության զարգացմամբ, օրենսդրական փոփոխություններով: Ներկայացվեցին գործնական աշխատանքների, պրակտիկաների, օտարալեզու գրականության օգտագործման հետ կապված հարցերը: Երկրորդ կիսամյակի կարևորագույն խնդիրներն են ավարտական աշխատանքների, թեզերի կատարումը, խորհրդատվությունների, ամփոփիչ քննությունների կազմակերպումն ու անցկացումը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ. Հ.Ղուլոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Հ.Զաքոյանի զեկուցումը ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և զարգացման հայեցակարգի մասին: Նա նշեց, որ քանի որ առաջադիմության հետ կապված հարցերն արդեն ներկայացվել և վերլուծվել են, ինքը չի անդրադառնա դրանց: Նա անդրադարձավ դասավանդման մեթոդներին: Պետք է կիրառել տարբեր մեթոդներ՝ ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, սակայն կան աշխատող և չաշխատող մեթոդներ, որը նշանակում է՝ պետք է ճիշտ կողմնորոշվել դասավանդման մեթոդի ընտրության հարցում: Առավել արդիական է խաղի մեթոդը, որը ոգևորում է ուսանողներին: Զեկուցողը կարևորեց նաև ուսանողներին հետազոտական աշխատանքների մղելու, հոդվածներ գրելու հանգամանքը: Այս առումով պետք է բարձրացնել թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների պատասխանատվությունը: Երկրորդ կիսամյակում Հ.Զաքոյանը ևս շեշտեց ավարտական աշխատանքների, թեզերի կատարման, խորհրդատվությունների, ամփոփիչ քննությունների կազմակերպման ու անցկացման կարևորությունը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ. Հ.Զաքոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտորՆ.Կուտուզյանի զեկուցումը ՀՄՖ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի Խաչատրյանի «Հայկական զրադաշտական և վաղքրիստոնեական

իրավունքի սկզբունքները» աշխատությունը տպագրության երաշխավորելու հարցի մասին: Զեկուցողը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնի նիստում և առաջարկվել է ներկայացնելնաև գիտխորհրդի քննարկմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Հումանիտար մասնագիտությունների դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Հ.Ղաջոյանը, պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ապրոյանը: Նշվեց, որ աշխատանքը նորություն է քննարկվող հարցերի լուսաբանման տեսակետից, ուստի արժանի է տպագրության: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ՀՄՖ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի Խաչատրյանի «Հայկական զրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի սկզբունքները» աշխատությունը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտորՆ.Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգը» հաստատելու մասին: Զեկուցողը նշեց, որ կանոնակարգը քննարկվել է դասախոսների շրջանում, ամբիոններում և առաջարկեց հաստատել այն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, ամբիոնների վարիչները: Նշվեց, որ նման կանոնակարգի անհրաժեշտությունը շատ է զգացվում: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-Հաստատել «Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգը»:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 4

2017թ ապրիլի 22-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

(զեկ՝. Հ.Ղաջոյան)

2.ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

(զեկ՝. Ս.Ամիրխանյան)

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի հաշվետվությունըԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի մասին: Նա, մրցունակ կադրերի պատրաստումը համարելով ուսուցման նպատակ, ներկայացրեց այն աշխատանքները, որոնք կատարվել են ֆակուլտետում նշված նպատակին հասնելու միտումով: Նախ անդրադարձ կատարվեց 1-ին կուրս ընդունելության, 1-ին կուրսեցիների և նրանց ծնողների մասնակցությամբ տեղի ունեցած ժողովի, հարցաթերթիկների միջոցով 1-ին կուրս ընդունվածների տրամադրվածությունն ու նախասիրությունները պարզաբանելու հարցերին, ապա ներկայացրեց ֆակուլտետի, բաժինների և կուրսերի առաջադիմությունը՝ հանգամանորեն վերլուծելով առաջադիմության հետ կապված խնդիրները: Ուսպլաններում մտել են նոր կրթական ծրագրեր, կատարվել են դասալսումներ: Դասախոսական կազմը հիմնականում մնացել է նույնը, կազմակերպվել են քննարկումներ, տարբեր բնույթի միջոցառումներ: Հ.Ղաջոյանը նաև ներկայացրեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունըտնտեսագիտական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի մասին:Նա ասաց, որ իրենց նպատակը որակյալ մասնագետների պատրաստումն է: Ներկայացնելով ուսման

առաջադիմության ցուցանիշները 2015-2016 ուստարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ նա նաև նշեց, որ աշխատում են ապահովել կրթության որակի շարունակական աճ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեցրեց տվյալներ զորակոչվածների և զորացրվածների, տարկետումների, տեղափոխությունների, հեռացումների և վերականգնումների վերաբերյալ: Ֆակուլտետում անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ, կազմակերպվել են գիտաժողովներ, դասախոսություններ, քննարկումներ: Ս.Ամիրխանյանը կարևորեց այն հանգամանքը, որ ուսուցումը կազմակերպվում է միջազգային չափանիշներին համապատասխան և շուկայի հարաճուն պահանջների հաշվառմամբ, ուստի ուսպլաններում ավելացվել են նոր դասընթացներ: Ներկայացնելով 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը՝ նա ասաց, որ այն համապատասխանում է ԳՊՀ ռազմավարական ծրագրի պահանջներին: Ս.Ամիրխանյանը ներկայացրեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ՀՄՖ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի Խաչատրյանի ««Հաճախապատում ճառքի» Ի ճառում առկա Արշակունիների հարստության ապագային վերաբերող կանխագուշակության տրամաբանական, իրավաբանական, արժեբանական, սոցիոլոգիական և պատմական վերլուծությունը» աշխատությունը տպագրության երաշխավորելու հարցը: Հարցը ներկայացրեց պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Զեկուցողը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնի նիստում և առաջարկվել է ներկայացնելնաև գիտխորհրդի քննարկմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Հումանիտար մասնագիտությունների դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Հ.Ղաջոյանը, պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Հարությունյանը: Նշվեց, որ աշխատանքը համակողմանի ուսումնասիրություն է Արշակունիների հարստության մասին, ուստի արժանի է տպագրության: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ՀՄՖ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի Խաչատրյանի ««Հաճախապատում ճառքի» Ի ճառում առկա Արշակունիների հարստության ապագային վերաբերող կանխագուշակության տրամաբանական, իրավաբանական, արժեբանական, սոցիոլոգիական և պատմական վերլուծությունը» աշխատությունը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգը» հաստատելու մասին: Նշվեց, որ այս ոլորտում պետք է կանոնակարգել աշխատանքները, մշակել չափանիշներ և կոնկրետ մոտեցումներ: Հարցը քննարկվել է նաև ռեկտորատի նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Թ.Ասոյանը, Հ.Ղաջոյանը, Վ.Գրիգորյանը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Հաստատել «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգը»:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 5

2017թ մայիսի 14-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 25-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ ռազմավարական պլանավորման և կառավարման հիմնախնդիրները:

/զեկ՝. ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյան, փորձագետներ/

2.Բուլղարիայի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Հրիստո Բելոևին ԳՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

/զեկ՝. ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումը ռազմավարական պլանավորման և կառավարման հիմնախնդիրների մասին զեկուցումը: Զեկուցողը կարևորեց այնպիսի ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը, որը հստակ կանոնակարգված է, նախանշված են նպատակներն ու խնդիրները, սկզբունքներն ու մեթոդները: Այնուհետև ներկայացրեց դրա ձևավորման ընթացքը, արդյունավետ կառուցակարգերը: Ռազմավարական կառավարումը միանշանակ սահմանում չունի, որովհետև անընդհատ զարգացում է տեղի ունենում, ուստի որոշակի ժամանակահատվածի համար անհրաժեշտ են հստակ քայլեր և պլանավորում՝ նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար: ՌԿ-ն ենթադրում է գիտելիքներ, ինտելեկտ, հուզականություն, հարաբերությունների,

մարդկային և ֆինանսական ռեսուրսների,տեղեկատվության կառավարում: Կարևոր է նպատակի որոշարկումը, ճանապարհային քարտեզի կազմումը՝ նպատակ-պլանավորում-իրագործում-վերլուծություն-թույլ և ուժեղ կողմերի բացահայտում-գնահատում-ախտորոշում շղթայով: Պետք է իրականացնել կառուցվածքային ստորաբաժանումների համաչափ կառավարում, նույնը պետք է լինի նաև ընդհանուր կորպորատիվ կառավարման դեպքում: Զեկուցման վերջում անդրադարձ կատարվեց ԳՊՀ-ում կատարված աշխատանքներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-1.Լ.Կառլովան ասաց, որ ԳՊՀ-ի հետ համագործակցությունը արդյունավետ է եվրոպական ծրագրերի շրջանակում: Նա կարևորեց ԳՊՀ-ում ծրագրի և իրագործման համապատասխանությունը, որը միշտ չէ, որ այլ տեղերում առկա է:

2.Ռ.Թոփչյանը նշեց, որ շատերը կարծում են, թե թղթային ծրագիրն է կարևորը, մինչդեռ գրվածը պետք է իրագործել, գտնել լուծման ուղիներ: ՌԿ-ին օժանդակում են ինքնավերլուծությունները, որոնք համարվում են ռազմավարության սկիզբ: ԳՊՀ-ն դա արել է, որին էլ այնուհետև անդրադարձավ Ռ.Թոփչյանը՝ շոշափելով կոնկրետ հարցեր, որոնց քննարկմանը և վերլուծությանը մասնակցեցին նաև փորձագետներ Ս.Կարաբեկյանը, Ա.Պապոյանը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-Ռ.Հակոբյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Բուլղարիայի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Հրիստո Բելոևին ԳՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու հարցը, որը ներկայացրեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ Հ.Բելոևը մեծ վաստակ ունի Բուլղարիայի կրթության և գիտության ասպարեզում, հասել է մասնագիտական ակնհայտ հաջողությունների, միաժամանակ մեծ ներդրում ունի Գավառի պետական և Բուլղարիայի Ռուսե քաղաքի Անգել Կանչևի անվան համալսարանների արդյունավետ համագործակցության ապահովման գործում: Ռ.Հակոբյանն առաջարկեց Հ.Բելոևին շնորհել «Գավառի պետական համալսարանի պատվավոր դոկտորի» կոչում: Արտահայտվեցին պրոռեկտորներ Ն.Կուտուզյանը, Ա.Ապրոյանը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Բուլղարիայի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Հրիստո Բելոևին շնորհել «ԳՊՀ պատվավոր դոկտորի» կոչում:

ԼՍԵՑԻՆ.- ՀՄՖ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի Խաչատրյանի «Ամբարտավանությունը որպես զրպարտչական և վաղքրիստոնեական իրավունքի նորմ» աշխատությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ռ. Հակոբյանը, պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ապրոյանը: Նշվեց, որ աշխատանքը հետաքրքրություն է ներկայացնում վաղ շրջանի իրավական նորմերի լուսաբանման տեսակետից և արժանի է տպագրության: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ԳՊՀ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի

Խաչատրյանի«Ամբարտավանությունը որպես գրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի նորմ» աշխատությունը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 6

2017թ հունիսի 17-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ներկայացում, վերլուծություն և գնահատում:

/զեկ՝. ԲՖ դեկան Թ.Ասոյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ներկայացում, վերլուծություն և գնահատում:

/զեկ՝. ԲՆՖ դեկան Մ.Ավագյան/

3.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ներկայացում, վերլուծություն և գնահատում:

/զեկ՝. ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան/

4.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ներկայացում, վերլուծություն և գնահատում:

/զեկ՝. ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան/ 5.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների ներկայացում, վերլուծություն և գնահատում:

/զեկ՝. պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի զեկուցումը 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների, վերլուծության և գնահատման վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ ատեստավորման հետ կապված նախաքննական և քննական ողջ գործընթացն իրականացվել է նախատեսված ժամանակացույցին համապատասխան: Վերանայվել և ուսանողներին է տրամադրվել քննական առարկայական հարցաշարերը, իրականացվել են խորհրդատվություններ, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններ: Ժամանակին առաջարկվել և հաստատվել են առարկայական հանձնաժողովների կազմերը: Ստեղծվել են աշխատանքային հանգիստ պայմաններ, արտակարգ դեպքեր չեն գրանցվել: Քննություններն ընթացել են բնականոն հունով, բողոքարկումներ չեն եղել: Քննություն հանձնող

շրջանավարտները բավարարված են եղել քննությունների ընթացքից: Հանձնաժողովների նախագահներն ու անդամներն իրենց գոհունակությունն են հայտնել աշխատանքային պայմաններից, ուսանողների պատրաստվածության մակարդակից և դասախոսական կազմի բարեխիղճ աշխատանքից: Քննական հանձնաժողովների նախագահները նաև արել են առաջարկություններ, որոնք միտում ունեն առավել կատարելագործել քննական գործընթացը: Մասնավորապես հայոց լեզվի և հայ գրականության միացյալ հանձնաժողովի նախագահ Գ.Մուրադյանը առաջարկել է ուշադրություն դարձնել բանավոր խոսքի զարգացման, գեղարվեստական գրականության ընթերցանության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների արդիականության հարցերին:

Թ.Ասոյանը այնուհետև ներկայացրեց քննությունների արդյունքները, նշեց, որ դրանք քննարկվել են ամբիոնների, Ֆակուլտետի խորհրդի նիստերում և արվել են համապատասխան հետևություններ: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-ԲՖ դեկան Թ.Ասոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի զեկուցումը 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների, վերլուծության և գնահատման վերաբերյալ: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց նախաքննական և քննական գործընթացները, քննական հանձնաժողովների աշխատանքն ու կարծիքները, ուսանողների պատրաստվածությունը: Կարևորվեց նախագահների առաջարկությունները, որոնք քննարկման փուլում են: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումը 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների, վերլուծության և գնահատման վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ այդ քննությունները ամփոփում են տարիների ընթացքում ամբիոնների, դեկանատների, դասախոսների կատարած աշխատանքը: Քննություններին ներկա են եղել ամբիոնների վարիչները, դեկանը, փոխդեկանը, ուստի քննությունների արդյունքների վերլուծությունը և գնահատումը միասնական կարծիքի արտահայտություն է: Այնուհետև քննությունների արդյունքները ներկայացվեցին մասնակիցների ՄՈԳ-երի համեմատությամբ: Պարզվել է, որ տարբերություններ գրեթե չեն արձանագրվել: Ուսանողների պատասխանները եղել են գոհացուցիչ: Որոշ ուսանողներ քննությանը մասնակցող գործատուի կողմից աշխատանքի առաջարկ են ստացել: Ուսումնասիրվել են հանձնաժողովների նախագահների առաջարկությունները, որոնք վերաբերում են աշխատանքների տեխնիկական կողմի կատարելագործման, հարցատոմսերի բեռնաթափման, թեզերի գործնական ուղղվածության, թեմաների արդիականության, նյութի մակերեսային մատուցման բացառման հարցերին: Նշվեց,որ այդ առաջարկությունները հանգամանորեն կուսումնասիրվեն և կարվեն հետևություններ: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումը 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների, վերլուծության և գնահատման վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ ուսումնական տարին փակվում է ամփոփիչ ատեստավորման քննություններով, սակայն դա նաև նոր ուսումնական տարվա սկիզբ կարող է լինել: Քննությունների ընթացքում նկատված թերությունները, արված առաջարկությունները վերլուծվում, գնահատվում են և միջոցներ են մշակվում՝ հաջորդ տարում դրանք չկրկնելու համար: Այնուհետև ներկայացվեցին քննությունների արդյունքները և քննական հանձնաժողովների նախագահների դիտողությունները և առաջարկությունները: Մասնավորապես առաջարկվել է աշխատանքների ծավալները կրճատել հօգուտ բովանդակության ու հասնել թեմաների լիարժեք լուսաբանման, բացառել արտագրությունները համացանցից, տեսական հարցերի քննությունը շաղկապել իրականության հետ և կողմնորոշել դեպի իրական հետազոտություններ, աշխատանքները ներկայացնել շնորհանդեսների ձևով, մեծ ուշադրություն դարձնել գրախոսությունների թե՛ ծավալին, թե՛ բովանդակությանը:

Ս.Ամիրխանյանը նշեց, որ այդ խնդիրները կքննարկվեն ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում ու կարվեն համապատասխան եզրահանգումներ: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանիզեկուցումընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտորՆ.Կուտուզյանի զեկուցումը հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների, վերլուծության և գնահատման վերաբերյալ: Զեկուցողն իր հաշվետվությունը ներկայացրեց շնորհանդեսի ձևով: Նա նշեց, որ վերջնարդյունքները երևում են ամփոփիչ ատեստավորման ժամանակ: Այս տեսակետից պետք է հաշվի առնել յուրաքանչյուր առաջարկություն, նույնիսկ մանրուքները,վերափոխել աշխատանքները, մշակել նոր մոտեցումներ՝ սպասվող ծրագրային հավատարմագրումը հնարավորինս անթերի իրականացնելու համար: Ամփոփիչ ատեստավորման քննությունների վերլուծությունն ու գնահատումը նպաստում է ընդհանրապես համալսարանական կրթության զարգացմանը: Այնուհետև ներկայացվեցին քննությունների արդյունքներն ըստ բաժինների՝ համապատասխան մեկնաբանություններով և նախորդ տարվահամեմատությամբ: Հանգամանալից անդրադարձ կատարվեց հանձնաժողովների նախագահների տարաբնույթ առաջարկություններին: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ԳՊՀ պրոռեկտորՆ.Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտորՆ.Կուտուզյանի զեկուցումը ՀՄՖ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի Խաչատրյանի ««Հաճախապատում ճառքի» հեղինակի և հայկական

այբուբենի ստեղծման հարցերի շուրջ»աշխատությունը տպագրության երաշխավորելու մասին: Զեկուցողը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնի նիստում և հավանության է արժանացել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ա.Ապրոյանը, Հ.Ղաջոյանը: Նրանք նշեցին, որ աշխատանքը շոշափում է կարևոր հարցեր՝ կապված հայոց պատմության առանցքային և վիճահարույց իրողությունների հետ, որոնք աշխատության մեջ նորովի լուծում են ստացել: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- ՀՄՖ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Արտաշեսի Խաչատրյանի ««Հաճախապատում ճառքի» հեղինակի և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ» աշխատությունը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 7

2017թ օգոստոսի 17-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 27-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ՀՀ Անկախության տոնի և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ ԳՊՀ ԲՖ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մամիկոն Զալիբեկի Հակոբյանին պետական պարգև հանձնելու հարցը:

/զեկ՝. ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյան/

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումը ՀՀ Անկախության տոնի և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ ԳՊՀ ԲՖ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մամիկոն Զալիբեկի Հակոբյանին պետական պարգև հանձնելու մասին: Զեկուցողը նշեց, որ Մ.Զ.Հակոբյանը ակտիվ գիտահետազոտական գործունեություն է ծավալել, համալսարանում 20-ամյա մանկավարժական աշխատանքը եղել է արդյունավետ, զգալի վաստակ ունի ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կայացման և զարգացման, ուսումնական գործընթացում նորարական տեխնոլոգիաների կիրառման գործընթացում: Մեծ է նրա ավանդը Հայաստանի Հանրապետությունում և մասնավորապես Գեղարքունիքի մարզում ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի, համակարգչային ճարտարագիտության ոլորտի երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Ռ.Հակոբյանն առաջարկեց Մ.Զ.Հակոբյանի թեկնածությունը սահմանված կարգով պետական պարգև շնորհելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան, ԲՆՖ դեկան Մ.Ավագյան, ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան, ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան, ամբիոնի վարիչ Հ.Մելիքյան: Նրանք ներկայացրին և բարձր գնահատեցին Մ.Զ.Հակոբյանի գիտահետազոտական, մանկավարժական, նորարական բեղուն գործունեությունը, կարծիք հայտնեցին, որՄ.Զ.Հակոբյանն արժանի է նման պարգևի: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Դիմել ՀՀ կրթության և գիտության նախարար պարոն Լ.Մկրտչյանին՝ Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակի առթիվ համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Զ.Հակոբյանին պետական պարգև շնորհելու միջնորդությամբ ՀՀ նախագահին դիմելու առաջարկությամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 8

2017թ. օգոստոսի 28-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 28-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ 2017-2018 ուսումնական տարվա մասնագրերի, աշխատանքային ծրագրերի հաստատում:

/զեկուցող՝ դեկաններ և պրոռեկտորներ/

2.ԳՊՀ-ի իրականացրած մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական պլանների հաստատում:

/զեկուցող՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանում 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերի մասին: Զեկուցողը նշեց, որ մասնագրերի լրամշակման ուղղությամբ ծավալուն աշխատանքներ են տարվել: Վերանայվել են ՄԿԾ-ների վերջնարդյունքները, ակնկալվող ընդհանրական, մասնագիտական և գործնական իրազեկությունները: Մասնագրերը մշակվել են նոր մեթոդաբանությամբ, դրանցում ամրագրվել են անհրաժեշտ սպառիչ տեղեկատվություն: Մասնագրերի մշակման ընթացքում

համագործակցային աշխատանքներ են տարվել ամբիոնների և դեկանատների հետ: Մասնագրերի շուրջ ծավալվեց ակտիվ քննարկում: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Հաստատել Գավառի պետական համալսարանում 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մասին: Զեկուցողը նշեց, որ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև ռացիոնալ ուսումնական պլանների առկայությամբ. դասընթացների ընտրությունը և դասաժամերի ճիշտ բաշխումը կարևոր նախապայման է կրթության արդյունավետության բարձրացման համար: Այնուհետև նա անդրադարձավ ուսումնական պլաններին ըստ ֆակուլտետների՝ նշելով, որ համատեղ արդյունավետ աշխատանքներ են կատարվել դեկանատների հետ: Հարցի շուրջ ծավալվեց քննարկում: Արտահայտվեցին ֆակուլտետների դեկանները և փոխդեկանները: Առաջարկվեց հաստատել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները 2019-2020 ուստարվա համար: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Հաստատել Գավառի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 9

2017թ. սեպտեմբերի 16-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 23-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ գրադարանի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկուցող՝ գրադարանի վարիչ Ն. Պետրոսյան/

2.ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկուցող՝ SS բաժնի վարիչ Վ. Ավետիսյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ գրադարանի վարիչ Ն.Պետրոսյանի հաշվետվությունը 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Նա նշեց, որ գրադարանի նպատակն է նպաստել ուսումնական գործընթացին՝ սովորողների մոտ ձևավորելով տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողություն և հմտություն, զարգացնելով ընթերցանության մշակույթ: Անդրադառնալով կատարված աշխատանքներին՝ զեկուցողն ասաց, որ այս ուսումնական տարում գրադարանը համալրվել 1200 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ: Նվիրատվություններ են կատարվել սփյուռքի նախարարության, մարզային գրադարանի, անհատների կողմից, գրքեր են ձեռք բերվել նաև համալսարանի ֆինանսական միջոցներով: Մուտքագրված գրականությունը նկարագրվել և դասակարգվել է, դուրս են

գրվել բարոյապես և ֆիզիկապես մաշված գրքեր: Կատարվել է մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում. լրամշակվել են մասնագիտական հոդվածների, թեմատիկ հանձնարարականների, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկերը: Ուսումնական տարում գրադարանն իրականացրել է նաև մի շարք միջոցառումներ, գրքերի քննարկումներ: Գրադարանը համագործակցային կապեր ունի տարբեր գրադարանների, այդ թվում՝ Հայաստանի ազգային գրադարանի հետ: Ն.Պետրոսյանը ներկայացրեց նաև 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Հիմք ընդունելով Ն.Պետրոսյանի հաշվետվությունը՝ ԳՊՀ գրադարանի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ գրադարանի 2017-2018 ուստարվա զարգացման ուղղությունները:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ Վ.Ավետիսյանի հաշվետվությունը 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ բաժնում իրականացվել են բազմաբնույթ աշխատանքներ: Նախագծվել և մշակվել է ԳՊՀ պաշտոնական կայքի նոր տարբերակը, գործարկվել է նոր սերվերային կենտրոն, տեղադրվել են նոր համակարգիչներ, արդիականացվել են համակարգչային լսարանները և այլն: Ներկայացնելով բաժնի 2017-2018 ուստարվա զարգացման ուղղությունները՝ Վ.Ավետիսյանը հավաստիացրեց, որ համալսարանի SS բաժինը աշխատանքները կիրականացնի պատշաճ մակարդակով: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Հիմք ընդունելով Վ.Ավետիսյանի հաշվետվությունը՝ ԳՊՀ SS բաժնի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ SS բաժնի 2017-2018 ուստարվա զարգացման ուղղությունները:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 10

2017թ. սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 25-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

/զեկուցող՝ բաժնի վարիչ Պ. Մուրադյան/

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ԲՖ դեկան Թ. Ասոյան/

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ԲՆՖ դեկան Մ. Ավագյան/

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Պ.Մուրադյանի հաշվետվությունը 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Պ.Մուրադյանը նշեց, որ բաժինը կազմակերպել է ճանաչողական, տեղեկատվական, գովազդային ծրագրեր ու միջոցառումներ, բաժնի կողմից կատարվել է համալսարանի գիտահետազոտական, կրթադաստիարակչական գործունեության լուսաբանում, ապահովվել է գործընկեր կազմակերպությունների, շահակիցների հետ սերտ

համագործակցություն: Բաժինը լրամշակել և ԳՊՀ գիտխորհրդի հաստատմանն է ներկայացրել ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի նոր կանոնակարգը:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց բաժնի գործառույթների իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները, որոնք տարաբնույթ են: Ներկայացվեց աղյուսակ, որտեղ հանրային կապերի ապահովման ուղղությամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ թվային տվյալներ էին բերված: Պ.Մուրադյանը ներկայացրեց բաժնի 2017-2018 ուստարվա զարգացման ուղղությունները: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Հիմք ընդունելով ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Պ.Մուրադյանի հաշվետվությունը՝ ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ԲՖ դեկան Թ.Ասոյանի հաշվետվությունը 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի վերաբերյալ: Թ.Ասոյանն ասաց, որ բանասիրական ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է բացթողումներն ու թերությունները շտկելու և ձեռքբերումներն ամրապնդելու ու զարգացնելու, առավել արդյունավետ դարձնելու ճանապարհով: Այնուհետև զեկուցողը շնորհանդեսի ձևով ներկայացրեց տվյալներ ընդունելության, ուսանողական համակազմի, շարժի վերաբերյալ: Ակադեմիական առաջադիմությունը ներկայացվեց ըստ կուրսերի, բակալավրիատի, մագիստրատուրայի և ֆակուլտետի՝ համեմատելով նախորդ ուստարվա ցուցանիշների հետ: Առանձին անդրադարձ կատարվեց ամփոփիչ ատեստավորման քննություններին:

Թ.Ասոյանը կարևորեց ուսպլանների, առարկայական ծրագրերի, ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ուղղությամբ: Պայմանավորված նոր որակավորմամբ՝ ավելացել են հոգեբանամանկավարժական բնույթի առարկաներ, Փոփոխություններ են կատարվել մագիստրոսական առարկայացանկերում՝ հաշվի առնելով ուսանողների և այլ շահառուների ցանկություններն ու առաջարկությունները: Աշխատանքներ են տարվել ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: Զեկուցման վերջում, ամփոփելով հաշվետվությունը՝ Թ.Ասոյանը ներկայացրեց

կատարված աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը՝ ներառելով համալսարանի աշխատանքների բարելավման ծրագիրը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Հիմք ընդունելով ԲՖ դեկան Թ.Ասոյանի հաշվետվությունը՝ բանասիրական ֆակուլտետի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.- ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունը 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի վերաբերյալ: Մ.Ավագյանը նշեց, որ ֆակուլտետն իր գործունեությունն իրականացրել է ըստ ԳՊՀ ռազմավարական ծրագրի: Ֆակուլտետի խորհրդի նիստերում քննվել են կրթական ծրագրերի իրականացման, կարգապահության ամրապնդման հետ կապված հարցեր: Ամբիոններում աշխատանքներ են տարվել ուսուցման նոր ձևերի ու մեթոդների ներդրման, դասախոսությունների արդիականացման, էլեկտրոնային քննությունների թեստային բազայի համալրման ուղղությամբ: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ընդունելության, ուսանողական համակազմի, առաջադիմության, կրթական ծրագրերի բարեփոխման, ամփոփիչ ատեստավորման քննությունների հետ կապված հարցերին: Մ.Ավագյանը ներկայացրեց բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը՝ համահունչ «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և ակտիվ նախաձեռնություններ» համահամալսարանական կարգախոսին: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- 1.Հիմք ընդունելով ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունը՝ բնագիտական ֆակուլտետի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցերի մասին: Հաստատման ներկայացվեց «Գավառի պետական համալսարանի էթիկայի կանոններ» փաստաթուղթը: Այն ներկայացրեց պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Ծավալվեց քննարկում: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Հաստատել «Գավառի պետական համալսարանի էթիկայի կանոններ» փաստաթուղթը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 11

2017թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 28-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյան/,

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ՏՖ դեկան Ս. Ամիրխանյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի հաշվետվությունը 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի գործունեության գլխավոր նպատակը եղել է ուսման որակի բարելավումը, ուսուցման արդյունավետության բարձրացումը: Տարանջատվել են «ուսման առաջադիմություն» և «ուսման որակ» հասկացությունները: Ուսման առաջադիմությունը պահպանվել է նախատեսված 75-80%-ի սահմաններում: Այնուհետև ներկայացվեցին տվյալներ ուսման առաջադիմության վերաբերյալ ըստ մասնագիտությունների և կուրսերի: Ուսման որակի հետ կապված՝ կատարվեցին գնահատականների տարբերակումներ: Աշխատանքներ են կատարվել բոլոր ամբիոններում ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի վերանայման և թարմացման ուղղությամբ, որոնք հիմնականում կապված են եղել մանկավարժական

բաղադրիչի ներառման հետ: Կարևոր էր Ֆակուլտետում համակարգչային լսարանի բացումը: Հ.Ղաջոյանը ներկայացրեց ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգն ըստ տարբեր ոլորտների: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- 1.Հիմք ընդունելով ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի հաշվետվությունը՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.- ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունը 2016-2017 ուսումնական տարվա գործունեության և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի վերաբերյալ: Ըստ զեկուցողի՝ ֆակուլտետում իրականացվում է ուսումնական անխափան գործընթաց, կարևորվում է արտաքին ու ներքին միջավայրերի վերլուծությունը, ընդլայնվում է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական գործընթացում: Անդրադարձ կատարվեց ֆակուլտետի զարգացման հայեցակարգով նախատեսված դրույթներին,

նշվեցին թերակատարումները, որոնք ներառվելու են նոր ուստարվա հայեցակարգում: Աղյուսակների միջոցով ցուց տրվեցին ուսհամակազմին, առաջադիմությանը վերաբերող համեմատական վերլուծություններ: Բազմաբովանդակ աշխատանքներ են իրականացվել ուսանողական ինքնակառավարման մարմինների միջոցով: Զեկուցման երկրորդ մասում Ս.Ամիրխանյանը ներկայացրեց ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- 1.Հիմք ընդունելով ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունը՝ տնտեսագիտական ֆակուլտետի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի հաղորդումը Վ.Առաքելյանի, Հ.Բաբայանի, Լ.Ղուկասյանի «Ֆինանսական հաշվառում» (ռուսերեն) և «Հաշվառման կազմակերպումը փոքր և միջին բիզնեսում» ուսումնական ձեռնարկները տպագրության երաշխավորելու մասին: Նշվեց, որ ձեռնարկները քննարկվել են համապատասխան ամբիոններում և առաջարկվել է երաշխավորել տպագրության: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Վ.Առաքելյանի, Հ.Բաբայանի, Լ.Ղուկասյանի «Ֆինանսական հաշվառում» (ռուսերեն) և «Հաշվառման կազմակերպումը փոքր և միջին բիզնեսում» ուսումնական ձեռնարկները երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 12

2017թ. նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 28-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ միջազգային ծրագրերի իրականացման հաշվետվություն:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Ապրոյան/

2.ԳՊՀ 2016-2017 ուսումնական տարվա տնտեսական գործունեության հաշվետվություն և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ա. Ապրոյան /,

3.ԳՊՀ Որակի ապահովման բաժնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

/զեկուցող՝ բաժնի վարիչ Ա. Մայիլյան/,

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանի հաշվետվությունը միջազգային ծրագրերի իրականացման վերաբերյալ: Զեկուցողը նախ հանգամանորեն ներկայացրեց ներկայացրեց Tempus ծրագրերը, որոնք արդեն ավարտվում են: Դրանց ակտիվ մասնակցություն է ունեցել Գավառի պետական համալսարանը: Ա.Ապրոյանը նշեց այն դասախոսների և ուսանողների անունները, որոնք այդ ծրագրերի շրջանակներում եղել են եվրոպական համալսարաններում: Այնուհետև նա անդրադարձավ Erasmus Plus ծրագրերին, որոնք նոր են և 9 բուհ գործակցում են այդ ծրագրերի շրջանակներում: Կարևորվեց ԳՊՀ-ի և եվրոպական այլ բուհերի միջև համագործակցության հուշագրեր կնքելու գործընթացը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Ա.Ապրոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Շարունակել ակտիվորեն մասնակցել միջազգային փոխանակման ծրագրերին, կնքել համագործակցության հուշագրեր եվրոպական բուհերի հետ:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանի հաշվետվությունը 2016-2017 ուստարվա տնտեսական գործունեության վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքները տարվել են շարունակականության սկզբունքով: Ձեռք են բերվել SS ոլորտի սարքավորումներ, կազմակերպվել են կենցաղային, սպասարկման աշխատանքներ, վերանորոգվել են լսարաններ, տանիքը, հանրակացարանը: Որոշ աշխատակիցներ ստացել են պարգևատրումներ: Այնուհետև Ա.Ապրոյանը ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարվա ԳՊՀ տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները: Նշվեց, որ շատ աշխատանքներ են նախատեսվում իրականացնել: Անհրաժեշտ է կատարել գրադարանների, ընթերցասրահների փոփոխություններ, գլխավոր մասնաշենքում կստեղծվի դահլիճանման սենյակ, կշարունակվի լսարանների և մեծ դահլիճի վերանորոգումը: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- 1.Ա.Ապրոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ 2017-2018 ուսումնական տարվա տնտեսական գործունեության հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Մայիլյանի հաշվետվությունը ԳՊՀ Որակի ապահովման բաժնի 2016-2017 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքները բաժնում տարվել են երեք ուղղություններով՝ կանոնակարգի և հարցաթերթերի մշակում, վերլուծություններ: 1-ին կիսամյակում մշակվել է 82, 2-րդ կիսամյակում՝ 92 հարցաթերթ՝ ուսանողների, ծնողների և գործատուների շրջանում հարցումներ կատարելու նպատակով: Այնուհետև անդրադարձ կատարվեց հարցումներին, ներկայացվեցին արդյունքները՝ համապատասխան վերլուծություններով: Ա.Մայիլյանը ներկայացրեց նաև ԳՊՀ Որակի ապահովման բաժնի 2017-2018

ուսումնական տարվա զարգազման հիմնական ուղղությունները: Նշվեց, որ բաժնի աշխատանքները կընթանան կատարելագործման ուղիով: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- 1.Ա.Մայիլյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ Որակի ապահովման բաժնի 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԳՊՀ ընթացիկ հարցերը ներկայացրեց և նիստն ամփոփեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 13

2017թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 28 անդամներ, Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ.Բադալյանը, մարզի 43 դպրոցների տնօրեններ:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.«Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի նախագծի» քննարկում:

/ զեկ՝. Ռ.Հակոբյան /

2.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2017թ. ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2018թ. ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

3.ԳՊՀ 2016-2017 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվություն և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան /

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումը .«Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» նախագծի վերաբերյալ: Նա նշեց, որ նախագիծը քննարկվում է տարբեր մակարդակներում, արվում են առաջարկություններ, որոնք հաշվի կառնվեն ծրագրի լրամշակման ժամանակ: Մարզում քննարկումը արդյունավետ անցկացնելու նպատակով որոշվել է համագործակցել մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության,

մարզի 43 դպրոցների հետ: Այնուհետև Ռ.Հակոբյանը շնորհանդեսով ներկայացրեց ծրագիրը համապատասխան մեկնաբանություններով: Նշվեցին առավելություններն ու թերությունները, ասվեց, որ ծրագիրը լուրջ լրամշակման կարիք ունի:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.- 1.ԳՊՀ դեկաններ Հ.Ղաջոյանը, Մ.Ավագյանը, Ս.Ամիրխանյանը, Թ.Ասոյանը: Նրանք նշեցին, որ ծրագիրը երկարաժամկետ է, ուստի պետք է հաշվի առնել ամեն մի մանրուք, որովհետև ծրագրի իրագործման համար անհրաժեշտ կլինի մարդկային, նյութական, ֆինանսական հսկայական ռեսուրսներ: Բացի դրանից՝ ծրագրի նախագծում կան բացթողումներ, անհասկանալի ձևակերպումներ, ոչ իրական դիտարկումներ:

2.Դպրոցի տնօրենների անունից հանդես եկավ Մեծ Մասրիկի դպրոցի տնօրեն Ա.Հակոբյանը: Նա նշեց, որ ծրագիրը կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտում էական փոփոխություններ կատարելու, կրթության որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու առումով: Սակայն դրա համար պետք է կատարելագործել օրենսդրությունը, վերացնել իրավական ակտերի միջև եղած հակասությունները:

3. Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ.Բադալյանը, անդրադառնալով արտահայտված կարծիքներին, իր ելույթում ևս անդրադարձավ մի շարք թերությունների, որոնց առկայությամբ ծրագիրը հաջողություն չի ունենա: Նա առաջարկեց արտահայտված կարծիքները ի մի բերել, մշակել և ներկայացնել ԿԳ նախարարություն: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Առաջարկել ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանին ի մի բերել արտահայտված կարծիքներն ու առաջարկությունները, խմբագրել և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարություն:

ԼՍԵՑԻՆ.-Ն.Կուտուզյանի՝ ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2017թ. ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2018թ. ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի հարցը: Զեկուցման սկզբում Ն.Կուտուզյանը ներկայացրեց

ընդունելության, ուսանողական համակազմի, ուսանողների շարժի հետ կապված հարցերը: Նշվեց, որ 2017թ. շրջանավարտներին առաջին անգամ տրամադրվեց դիպլոմի երկլեզու հավելված, 13 ուսանողների շնորհվել է գերազանցության դիպլոմ, 5 ուսանող ընդունվել է մագիստրատուրա, 1 ուսանող սովորել է Սապիենզայի համալսարանում, երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմել և ընդունվել է 20 ուսանող: Այնուհետև անդրադարձ կատարվեց ուսանողների շարժի այլ կողմերի:

Զեկուցողը կարևորեց այն հանգամանքը, որ կրթության որակի ապահովման գործընթացում բարձրացել է ուսանողների դերակատարումը. մշտապես ուսումնասիրվել են նրանց կրթական կարիքները, հատկապես մասնագիտությամբ աշխատող ուսանողների առաջարկությունները քննարկվել են և հնարավորինս բավարարվել: Մշտապես եղել են ֆինանսական աջակցության ծրագրեր: Ն.Կուտուզյանը ներկայացրեց 2018թ. հեռակա ուսուցման ֆակուլտետի զարգացման հայեցակարգը, որը ելնում էր ԳՊՀ ռազմավարական ծրագրից: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Հիմք ընդունելով ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտոզյանի հաշվետվությունը՝ ԳՊՀ ՀՈՒՖ 2017թ. գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ 2016-2017 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին հարցը: Զեկուցողը նշեց, որ նշված ուստարում գրանցվել են ձեռքբերումներ ինչպես նոր գործընկերներ ունենալու, այնպես էլ կրթական և գիտական գործունեության որակի արտաքին գնահատման տեսակետից: Համալսարանն անցավ ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթաց միջազգային և ազգային փորձագետների դրական եզրակացությունների հիմքով: Այնուհետև Ն.Կուտուզյանն հանգամանորեն անդրադարձավ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի,

շարունակական կրթության և երկրորդ մասնագիտության կարգով ընդունելություններին, տեղափոխություններին և ակադեմիական առաջադիմության ցուցանիշներին՝ այդ ամենը ներկայացնելով համապատասխան դիագրամներով:

Համալսարանում ուշադրության կենտրոնում է եղել մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսներով ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը համալրելու հարցը: Կարևորվեց ասպիրանտական գիտակրթական ծրագրերի մշակման հարցը: Տարածաշրջանային բուհ լինելու հանգամանքից ելնելով՝ ասպիրանտական ծրագրում հետազոտության ողղվածություն է սահմանվել՝ հաշվի առնելով Գեղարքունիքի մարզի զարգացման համար հեռանկարային ոլորտները: Մշակվել են մի շարք կանոնակարգեր և ուղեցույց: ԵՄ ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ ու դասընթացներ: ՈԱԱԿ-ի կողմից համալսարանում կազմակերպվեց փորձագիտական խմբի 4-օրյա այց և տեղի ունեցավ հանդիպում-քննարկումներ:

ԳՊՀ-ում շարունակվել են գիտահետազոտական և ուսումնամեթոդական բնույթի աշխատանքների տպագրությունը, շնորհվել են դոցենտի գիտական կոչումներ: Աշխատանքներ են տարվել միջազգային ծրագրերին մասնակցելու, մարզի դպրոցների հետ համգործակցելու ուղղություններով: Ն.Կուտուզյանը ներկայացրեց 2017-2018 ուստարվա ԳՊՀ ուսումնագիտական զարգացման ռազմավարական ուղղությունները՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ ուսումնական տարին հայտարարվել է նոր մտածողության, նոր մոտեցումների և ակտիվ նախաձեռնությունների տարի: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.- Հիմք ընդունելով ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտոզյանի հաշվետվությունը՝ ԳՊՀ 2016-2017 ուստարվա ուսումնագիտական գործունեությունը գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ 2017-2018 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐԸ ներկայացրեց ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Նա ներկայացրեց ԳՊՀ մասնագիտություններին, ընդունելությանը, վարձավճարներին վերաբերող փաստաթղթեր, ինչպես նաև «Գավառի պետական համալսարանի ռազմավարական ծրագրի և ներբուհական իրավական ակտերի մշակման, ընդունման և փոփոխության

ընթացակարգը» և առաջարկեց հաստատել: Նշված փաստաթղթերի շուրջ ելույթներ ունեցան ֆակուլտետների դեկանները, գիտխորհրդի այլ անդամներ: ԳՊՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.-1.Հաստատել 2018-2019 ուստարվա առկա ուսուցման մագիստրատուրայի մասնագիտությունները և ուսման վարձաչափերը:

2. Հաստատել 2018-2019 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի մասնագիտությունները, ընդունելության քննությունները և ուսման վարձաչափերը:

3. Հաստատել 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի մասնագիտությունները, ընդունելության քննությունները և ուսման վարձաչափերը:

4.Հաստատել «Գավառի պետական համալսարանի ռազմավարական ծրագրի և ներբուհական իրավական ակտերի մշակման, ընդունման և փոփոխության ընթացակարգ» փաստաթուղթը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**